1267 թուին(*)։ Զպէտք է շփոթել սորան Վարդան պատմիչի հետ, որ սրանց կըրտսեր ժամանակակիցն է։ Դաւիթ վարդապետը Քոբայրեցին է, դարձեալ հեղինակ Պատճառաց գրքի և ուրիշ աշխատութիւնների, բայց նաև ԶԶ–ի ստացող, անձամբ արտագրել է Գրիգոր աստուածաբանի «Ի ծնունդն քի.», «Առ որս» եւ «Ցաղագս Եւնոմիոսացն եւ այլոցն չար աղանդից» աշխատութիւնները եւ արտագրել տուել Գոշ Մխիթարի Երեմիայի մեկնութիւնը, «զի անպարապ եղեալ իմոյս անձին ի ժամանել և գրոշմել զսա, այլ և այլում տըրխ-

օրինակութիւնը կատարուած դարձեալ նոյն Տիրացու գրչի ձեռքով(*). դժուար է մեզ ասել, թէ Հաղբատի այս արհին Յովհաննէս առաջի՞նն է, թէ Յովհաննէս Դ. Դոփեանը, որովհետեւ պարզուած չէ թէ ո՛ր Վարդանն է հեղինակը։ Արարածոց մեկնութեան հեղինակ Վարդանը գրել է իւր աշխատութիւնը «ի թվիս Զժ (= 1261) ի խնդրոյ արհիական տն. Համոզասպայ և վարդապետին Գրիգորի փակակալին սբ. ուխտին Սանահնին», ինչպէս և Օձնեցու վկայաբանութիւնը(**)։ Իսկ Յովհաննէս Դ. Դոփեանը սրբագրել է Վարդանի հըն-



(Պատկեր 13)

մորայ եռոււ գծել և ապաշաւ ունիմ, թէպէտ և ուղղեցի յետոյ», վերջում մի պատմական կարեւոր յիշատակարան աւելացնելով Օրբէլեանց ապստամբութեան մասին ընդդէմ Գէորգի III–ի(**)։ Սաղմոսի մեկնութեան հեղինակ Վարդանը գրել է «չարժեալ ի հոգւոյն սրբոյ եւ յարհիականէն Հաղբատայ և յաշակերտաց իւրոց», ընդ-

(*) Ձեռ. էջմ. N 4139 (բերուած Տաթեւից N 9) 516բ։

(**) Ձեռ. էջմ. N 163|260. 233ա. և N 913 նժ.։ Թորգոմ արքեպիսկոպոսի Ցուց. Սեբաստ. Սուրբ Նշանի Զ. N 153։ Գերեզմանը Հաղբատումն է։

գամատեանի այս մեկնութիւնը, որ և Գէորգ Սկեռացու աշակերտ Երեմիան 1296 թ. ընդօրինակել տալով Աւշին գրչի ձեռքով, բերում է և այդ օրինակի յիշատակարանը. «յիշման բարւոյ արժանաւորն և զմեծապատիւ արհիեպիսկոպոսն մեծահըռչակ սբ. ուխտին Հաղբատայ զտր. Յոհաննէս, որ զաւրինակս էր սրբագրեալ և զնոր(ին ձե)ռասուն զեղբաւրորդին հարազա(տ) Սարգիս քահանայ, որ ի վարժս կրթ(ութե.)

(*) Ձեռ. էջմ. N 1204|1119։

(**) Ձեռ. էջմ. N 1204|1119 և N 920 նժ.։